

## ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ ԼԵՁՎԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՆԻՐԻ ՄԱՍԻՆ

Մ. Ե. ԱՍԱՏՐԹԱՆ

Ինչպես հայտնի է, 17-րդ դարից սկսած աշխարհաբարի երկու ճյուղերի ինքնուրույն զարգացումը 19-րդ դարի կեսերին հանդեպնում է մեր ազգային լեզվի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի կազմավորմանը: Հասկանալի է, որ մի փոքր, աշխարհով մեկ սփռված ժողովրդի համար երկու գրական լեզուների գոյությունը խանգարիչ գործոն է ազգի միասնությանը պահպանման համար: Ահա այդ հանգամանքով է բացատրվում այն շահագրգիռ հետաքրքրությունը, որ ցուցաբերել և ցուցաբերում են հայ մտավորականության ներկայացուցիչները հայ գրական լեզուների միասնականացման, մի ընդհանուր գրական լեզու ունենալու հարցի վերաբերյալ: Այս խնդրին անդրադարձող գիտնականների մեծ մասը սովորաբար գրտնում է, որ հայոց միասնական գրական լեզուն կարող է ստեղծվել արևելահայերենի և արևմտահայերենի փոխդիտմաների հիմքի վրա: Այս հարցն առաջին անգամ գիտական հողի վրա է դրել վաստակաշատ հայագետ Մ. Աբեղյանը դեռևս 19-րդ դարի վերջերի<sup>1)</sup>: Նախ նշենք, որ մենք անընդունելի ենք համարում Մ. Աբեղյանի հետևյալ դրույթը. «Եթե մենք այժմ երկու գրական լեզու ունինք, այդ հատկապես արևելյան հայոց անցյալ գրագետների անհեռատեսության շնորհիվ է: Մեր արևելյան գրական լեզուն արդի ձևով իսկապես գոյություն պիտի չունենար, եթե նախադյան, նազարյան, Պատկանյան և ուրիշները, որոնք սկիզբն դրին այս գրական լեզվին, ավելի ծանր մտածած լինեին իրենց գործի վրա և հայությանն Ռուսիայի սահմաններից դուրս ևս տեսնեին» (էջ 431): Արևելահայ գրական լեզվի կազմավորումը ոչ թե բացատրվում է առանձին, թեկուզ և շատ նշանավոր, գործիչների նախասիրություններով ու ցանկություններով, այլ պայմանավորված էր արևելյան բարբառների և դրանց զուգընթաց արևելյան աշխարհաբարի զարգացման պատմությամբ: Իհարկե՛, տեսականորեն կարելի է պատկերացնել արևելահայ գրական լեզվի մի այլ տեսք ու փերպարանք, քան ունեինք 19-րդ դարի վերջերին կամ ունենք այսօր: Բայց մեկ է, այդ վարկածային լեզուն՝ հարազատության, գործադրման ու արմատավորման հեռանկարներից ելնելով՝ պետք է կազմավորվեր արևելյան բարբառների շրջանակներում, պետք է բարձրանար հենց նրանց հիմքի վրա՝ իր վրա կրելով արևելյան, բայց ոչ երբեք արևմտյան բարբառների լեզվական գլխավոր հատկանիշների գորշը:

Ասվածներից կարելի է հանգել այն եզրակացությանը, որ երբ հաշվի ենք առնում հայ ազգի քաղաքական ու լեզվական ռեալ իրավիճակը, այսինքն՝ իրարից այնքան տարբեր ՌԻՄ և ԿԸ ճյուղերի բարբառների գոյության փաստը Ռուսահայաստանում և Թուրքահայաստանում, ապա հայ ազգի համար ոչ թե մեկ, այլ երկու գրական լեզուների ստեղծումը ոչ թե անհատների կամքի,

<sup>1</sup> Տե՛ս «Արարտ», 1897, էջ 424—481, 494—508:

այլ հայ ազգի քաղաքական դրուձյան և հայերենի զարգացման ընթացքից բխող պատմական անխուսափելի անհրաժեշտություն էր: Ինչևհետեւ, առաջ քաշելով հայ միասնական գրական լեզվի հարցը և ճիշտ կերպով գտնելով, որ առանց հայ ազգի քաղաքական կյանքի մեծ փոփոխության այս խնդիրը լուծվել չի կարող, իսկ դա ապագայի հարց է, ուստի և Մ. Արեղյանը գտնում է, որ առայժմ պետք է մոտեցնել երկու գրական լեզուները այնպես, որպեսզի նրանք երկուստեք ավելի հեշտ հասկանալի լինեն:

Երկու գրականների մերձեցման համար Մ. Արեղյանն առաջարկում է հետևյալ միջոցները:

1. Արևմտահայերենում շատ են գործածվում գրաբարյան հոգնակի սեռականի ձևեր, ինչպես՝ ընկերութեանց, մանկանց, ընտանեաց, հայրենեաց և այլն: Արևմտահայերը պետք է հրաժարվեն այսպիսի ձևեր գործածելուց:

2. Արևմտահայերենում ներգոյական հորով չկա: Արևմտահայերը պետք է ընդունեն արևելահայերենի ներգոյական հոլովի ՈՒՄ ձևը:

3. Արևմտահայերենը հետևելով արևելահայերենին՝ Ի-ով վերջավորվող բառերը պետք է հոլովի ՈՒ ձևով, ինչպես՝ եկեղեցու, գինու, այգու և այլն (և ոչ թե եկեղեցույ || եկեղեցիի և այլն):

4. Արևմտահայերենում պետք է կանոնավորվի Ն և Ը հոդերի գործածությունը: Արևմտահայերը Ն հոդը դնում են նաև բաղաձայնով վերջացող բառերի վրա, մինչդեռ Ն հոդը պետք է դրվի ձայնավորով, իսկ Ը հոդը՝ բաղաձայնով վերջացող բառերի վրա, որը ձայնավորասկիզբ բառերից առաջ կարող է դառնալ Ն, ինչպես՝ Մարդն ասաց. Մարդն շտապեց:

5. Հատուկ անունները պետք է գործածվեն որոշիչ հոդով, այնինչ արևմտահայերը դրանք գործածում են նաև առանց որոշիչ հոդի, օրինակ՝ Խոռե՛ն մեծ բանաստեղծ մըն է. Ստեփաննոս ասաց և այլն:

6. Արևմտահայ գրական լեզվում սեռական հոլովը հոդ է ստանում, օրինակ՝ Այս գործին վրայ. Մեր պարտեզին ծաղիկները և այլն: Արևելահայերին հետևելով՝ արևմտահայերը պետք է հրաժարվեն սեռականի վրա, որոշիչ հոդ դնելուց:

7. Արևմտահայերենի անորոշ հոդերն են ՄԸ, Մ, ՄԸՆ, իսկ արևելահայերենի անորոշ հոդն է ՄԻ-ն: «Պահանջել, որ արևելյան լեզուն ՄԸ, Մ, ՄԸՆ ձևն ընդունի, այդ կլինեի անհնարինը պահանջել, քանի որ ՄԻ ձևն իր հաստատուն դիրքն ունի» (էջ 501), ուստի պահանջում է, որ արևմտահայերը արևելահայերի պես միշտ գործածեն ՄԻ հոդը, որը՝ կարող են ետադաս գործածել:

8. Արևմտահայերը առատորեն են գործածում ՄԸ անորոշ հոդը, մինչդեռ առանց հոդի էլ բառը մնում է անորոշ, ինչպես արևելահայերենում է, ուստի և արևմտահայերը պետք է սահմանափակեն անորոշ հոդի առատ գործածությունը:

9. Արևմտահայերը պետք է հրաժարվեն գործածելուց այն ժողովրդական ձևերը, որոնք գրաբարի և արևելահայերենի մեջ չկան, ինչպես՝ հասկնալ, գողնալ, մոռնալ, ճանչնալ, հարսնիք, ելլել, ըլլալ, ըսել, ընել, իյնալ, ինկտվ և այլն: Սրանց փոխարեն պետք է գործածել՝ հասկանալ, գողանալ, հարսանիք, լինել, ասել, անել, ընկնել և այլն:

Ոչ կանխակալ գիտնականն անմիջաբար կնկատի, որ Մ. Արեղյանը արևելահայ լինելով՝ մերժ երկու գրական լեզուների մերձեցում է պահանջում հոգուտ արևելահայերենի:

Մ. Արեղյանի հարուցած այս խնդիրների վերաբերյալ խիստ քննադատորեն հանդես եկան շատ մտավորականներ: Այսպես՝ օրինակ, հայտնի մանկավարժ Սեդրակ Մանդինյանը անարդար և խիստ վտանգավոր համարելով

Մ. Արեղյանի պահանջները՝ գրում է. «Այսուհետև բոլոր զիջումները արևմտյան բարբառից պետք է պահանջվին, իսկ արևելյանը հանգիստ հոգով կարող է ոչ մի նշանախնայից չհրաժարվել. ուրիշ խոսքով՝ այստեղ իսպառ արհամարհված է իրավախոհության առածը. «Տալիս եմ, որսպեսզի փոխարինես»<sup>2</sup>:

Իսկ լեզվարան Գրիգոր Վանցյանը նշում է. «Արեղյանի մեթոդի սխալն այն է, որ արևմտյաններին խրատ է տալիս այս կամ այն ձևով մոտենալու, ավելի խելացի կլինեն, եթե նա մեզ խրատեր արևմտյանի այս կամ այն առավելությունից օգտվելու»<sup>3</sup>:

Մ. Արեղյանի այս հարցադրումներին ավելի ընդարձակ անդրադառնում է Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության երկրորդ մասում: Այստեղ ավելորդ չենք համարում նշել, որ նա արևմտահայ էր և մինչև 20-ական թվականները իր աշխատությունները գրում էր արևմտահայերենով: Հ. Աճառյանը ևս իրավացիորեն գտնում է, որ Մ. Արեղյանը հավասարության սկզբունքը չի պահպանել և զիջումներ է պահանջում միայն արևմտահայերենից, իսկ արևելահայերենի մասին ոչ մի խոսք չկա, նրանից ոչ մի զիջում չի պահանջում: Նա միաժամանակ ճիշտ կերպով նշում է, որ Մ. Արեղյանի պահանջների իրականացմամբ ոչ թե՛ տեղի կունենա երկու լեզուների փոխադարձ մերձեցում, այլ արևմտյան լեզվի մերձեցում. արևելահայերենին, որով և, ըստ Մ. Արեղյանի, արևմտահայերենը «ամեն մի արևելահայ ընթերցողի համար հեշտ հասկանալի կլինի»:

Հ. Աճառյանն այն միտքն է զարգացնում, որ Մ. Արեղյանի նշած արևմտահայ ձևերը արևելահայերենի համար ոչ թե անհասկանալի, այլ խորթ են: Մերժելով Մ. Արեղյանի առաջարկություններն ու պահանջները՝ նա գրում է. «Արեղյանը ճիշտ չի դատում. արևմտյան հայերենի միջից ըլլալի՜ ձևը լինի դարձնելով կամ մը-ն մի շինելով ոչինչ դուրս չի գալ: Ըլլալ ձևը՝ մի տառի տարբերությամբ (ըլլի) գործածական է նաև արևելահայոց մեջ: Զկա մի արեւելահայ, որ շիմանա, թե արևմտահայերը ըլլալ ու մը են գործածում: Երբ ուզում են ծաղրել արևմտահայերին, հենց ըլլալ և մը ձևերն են մեջ բերում, նաև՝ ասիկա, աղիկա, անիկա, հոս, հոդ, հոն, ասանկ, ատանկ, անանկ և այլն»<sup>4</sup>: Նշելով նաև այն, որ արևմտահայ գրողների ստեղծագործությունները, ասենք, Մերենցի «Երկունքը», Հ. Պարոնյանի «Մեծապատիվ Մուրացկանները», «Բաղդասար աղբարը» և մյուս գործերը արևելահայերի համար հասկանալի են, Հ. Աճառյանը կրկին շեշտում է այն հանգամանքը, որ Մ. Արեղյանի նշած արևմտահայերեն քերականական ու բառային ձևերը դժվարություն չեն պատճառում հասկանալի լինելու համար, այլ արևելահայի ականջի համար, ինչպես ճիշտ կերպով արձանագրում է Մ. Արեղյանը, «փոքր-ինչ ծանր են թվում»: Իսկ դրա պատճառը միայն ու միայն այն է, որ Մ. Արեղյանի նշած ձևերը արևելյան բարբառներում գործածական չեն, և վերջիններումս դրանց փոխարինում են լեզվական այլ միջոցներ:

Ինչպես տեսանք, Մ. Արեղյանը արևմտահայերից պահանջում է ընդունել արևելահայերենի ներգոյականի ՈՒՄ ձևը: Այստեղ ևս երևում է նրա կանխակալությունը: Այս խնդրի վերաբերյալ Հ. Աճառյանը ճարտասանական հարցով գրում է. «Բայց մի՞թե մեջ բառը անհասկանալի է արևելահայոց, մի՞թե արևելահայերը չեն կարող ասել պարտեզի մեջ, փողոցի մեջ, հասարակության մեջ ևն և կամ մի՞թե ամեն անձնական հա-

<sup>2</sup> «Արարատ», 1898, էջ 128:

<sup>3</sup> «Անահիտ», 1899, էջ 136:

<sup>4</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ե., 1951, էջ 549:

տուկ անվան ներգոյականը մեջ ձևով չի գործածվում, ինչպես՝ Պետրոսի մեջ, Գրիգորի մեջ և ոչ թե Պետրոսում, Գրիգորում: Եթե հարցը իրար հասկանալի լինելու մասին լինեք, պիտի պահանջեր, որ արևելահայերը թողնեն այդ ում-ը և գործածեն միայն մեջ, որ թե իրենց հասկանալի է, և թե խորթ էլ չէ: Դժվարը և անսովորը կընջեն և հեշտը կգործածեն, թե՞ հակառակը»<sup>5</sup>:

Անշուշտ այստեղ հետաքրքրական է Հ. Աճառյանի կարծիքն այն մասին, թե արևմտահայերը ինչպես են ընկալում և ինչ վերաբերմունք ունեն արևելահայերենի մասին, նա գրում է. «Կարող եմ վկայել, թե արևմտահայերը բնավ հրեք դժվարութուն չեն կրում արևելահայ լեզուն հասկանալու համար, որ շափազանց սիրում են: Նրանք գերազանատում էին արևելահայերին՝ իբրև ողջախոհ, ազատամիտ, հեղափոխիչ մարդկանց: Նրանց ականջին «գալիս եմ, տալիս եմ, սիրում եմ, գնում եմ» ձևերը իբրև երաժշտություն, նվագ էին հընչում: Ոչ թե խորթութուն էին զգում, այլ ընդհակառակը մեծ հրճվանքով էին լսում մի եկվոր ռուսահայի խոսակցությունը»<sup>6</sup>:

Ինչքան էլ որ տարօրինակ ու անհավատալի լինի, արևմտահայ Հ. Աճառյանը արևմտահայ գրական լեզվի համար նախատեսում է տխուր վախճան: Նա նշում է, որ Արևմտահայաստանի և Փոքր Ասիայի հայության բնաջնջումով երկու գրական լեզուների միություն հարցը փաստորեն մեջտեղից վերանում է, և ժամանակի ընթացքում արևելահայերենը պետք է որ դառնա համայն հայության գրական լեզուն: Մեր կարծիքով որոշ տուրք տալով ժամանակի թելադրանքին՝ նա գրում է. «Հայոց մեծամասնությունը հավաքված է այժմ Խորհրդային Հայաստանում, որ է և կմնա իբրև հայոց բնավայրը: Նրան կից է Կովկասի և Ռուսաստանի հայությունը, որ գործածում է արևելահայ գրական լեզուն: Նույնը նաև ամբողջ Պարսկաստանի հայությունը: Գաղութներից Ամերիկայի հայերը լեզուն կորցնելու նախօրյակին են: Տրանսիայի, Ռումինիայի, Բուլգարիայի, Հունաստանի, Տաճկաստանի և Եգիպտոսի հայ գաղութները փոքր թիվ են կազմում: Սիրիայի հայությունն էլ թեև բավական բազմաթիվ է, բայց էլի Երևանի կեսից ավելի չէ: Իսկ երբ, ինչպես ծրագրված է, սփյուռքի հայերը հայրենադարձ լինին, կարճ ժամանակում նրանք էլ կամ նրանց որդիները կփոխեն իրենց լեզուն և արևելահայ գրականը միակ աիւրողը կդառնա»<sup>7</sup> (ընդգծումն իմն է— Մ. Ա.):

Բայց մեր աչքի առջև, ինչքան էլ այդ տխուր և ցավալի լինի, տեղի է ունենում: Հակառակ գործընթացը՝ արտագաղթ դեպի սփյուռքահայ գաղութները՝ հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգների գաղութը: Կեզվական տեսակետից այդ արտագաղթի բնական արդյունքը լինում է այն, որ արևելահայերը գտնվելով արևմտահայ գրական լեզվի միջավայրում՝ մի՛ երկու կամ երեք տերնդի ընթացքում աստիճանաբար կթողնեն արևելահայերենը և կյուրացնեն արևմտահայ գրական լեզուն: Եթե սրա հետ միասին հաշվի առնենք նաև ազգային զարթոնքի ուժեղացումը սփյուռքահայության մեջ, ապա պարզ կդառնա, որ արևմտահայերենը դեռ երկար ժամանակ կկատարի իր, ազգային լեզվի ֆունկցիաները սփյուռքում՝ հանդես գալով որպես հայ ազգի գոյապահպանման ամենաէական գործոնը, որով հայորդիները թոթովում են իրենց առաջին բառերը, հաճախելով հայկական դպրոցներ՝ ծանոթանում են հայոց պատմությանը և հայ գրականության կոթողներին, ներարկվում են ազգապահպանության և ազգասիրության գաղափարներով՝ շարունակելով հայ

<sup>5</sup> Աճռ., էջ 550:

<sup>6</sup> Աճռ., էջ 551—552:

<sup>7</sup> Աճռ., էջ 553:

ազգի մշակույթի զարգացումն ու հարստացումը նոր, ժամանակի պահանջներին ընդարձակ արժեքներով:

Այսպես ուրեմն՝ ինչքան էլ որ մի փոքր ազգի համար երկու գրական լեզուների գոյությունը խանգարիչ է ազգի միասնությունը, չի կարելի հարցն այնպես պատկերացնել, թե արևելահայերենի և արևմտահայերենի գոյությունն ու ինքնուրույն զարգացումը հայ ազգի համար դժբախտություն է: Այդ հարցը ունի նաև իր երկրորդ կողմը: Մի բույս ենթադրենք, թե 19-րդ դարի կեսերին մենք ունեինք մի միասնական դրական լեզու՝ արևելահայերենը: Այդ դեպքում մենք նույն տեսքով ու արտահայտություններով չէինք ունենա, ասենք, Պեղիկթաղյանի, Դուրյանի, Մեծարենցի, Վարուժանի, Սիամանթոյի և ընդհանրապես արևմտահայ պոեզիան, որը գերիչ է ու կախարդական ամենից առաջ իր լեզվական ինքնատիպությամբ՝ որպես հայ ազգային ոգու ամենամիտրական արտահայտություններից մեկը:

Նույն վարկածային ձևով ենթադրենք, թե 19-րդ դարի կեսերին՝ մենք ունեինք մի միասնական գրական լեզու՝ արևմտահայերենը: Այդ դեպքում, հասկանալի է, որ նույն տեսքով ու արտահայտությամբ չէինք ունենա, ասենք, Նալբանդյանի, Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի, Չարենցի ստեղծագործությունները, որոնց ներգործուն ուժն ու հմայքը հենց արևելահայ գրական լեզվի մեջ է: Չպետք է մոռանալ, որ բանաստեղծությունն ամենից առաջ լեզու է:

Ինչևհից, միասնական գրական լեզվի մասին հատկապես շատ է խոսվում ու գրվում վերջին տարիներին: Հայ մտավորականության լավագույն տերկայացուցիչները մտահոգված լինելով ազգի միասնության գաղափարներով և առաջնորդվելով «միասնական ազգ՝ միասնական գրական լեզու» նշանաբանով՝ արևելահայերենի ու արևմտահայերենի միասնականացման և ամբողջ հայ ազգի համար մի ընդհանուր գրական լեզու ստեղծելու կոչեր են անում: Այդ լեզուն, ինչպես հաճախ արտահայտվում են, պետք է որ իր մեջ ներառնի մեր երկու գրականների բոլոր «ազնիվ» ու «լավագույն» տարրերը և արտահայտության միջոցներն ու ձևերը՝ Նշենք, որ գիտական տեսակետից այս հասկացությունները ոչինչ չեն նշանակում և անիմաստ են, եթե դրանք վերաբերում են լեզվի հնչյունաբանությանը և քերականությանը, որովհետև վերջիններիս մեջ «ազնիվ» և «ոչ ազնիվ», «լավագույն» և «ոչ լավագույն» տարրեր ու միջոցներ գոյություն ունենալ չեն կարող: Եթե, համենաինչու, գործածենք այս տերմինները, ապա արևմտահայ գրական լեզվի համար «ազնիվ» է ու «լավագույն» նրա հնչյունական ու քերականական համախառն միասնական ամբողջությունը, իսկ արևելահայ գրական լեզվի համար՝ նրա հնչյունական ու քերականական համակարգերի միասնական ամբողջությունը: Ահա թե ինչու մինչև այժմ հաջողություն չեն ունեցել և չէին էլ կարող ունենալ մեր երկու գրական լեզուների միասնականացման ցանքերը: Մեր խորին համոզմամբ՝ դրանք հաջողությամբ չեն կարող պսակվել նաև ապագայում, որովհետև անտրամաբանական և հակագիտական է արևելահայ և արևմտահայ գրական լեզուների հնչյունական ու ձևաբանական համակարգերի տարբերությունների քննությամբ առանձնադրել «լավագույնները», դրանք դնել ապառաջ գրական միասնական լեզվի հիմքում և այսպիսով ստեղծել մի միասնական ազգային գրական լեզու և առաջարկել, ազգին գործածել այդ լեզուն:

Ասվածը բոլոր տանք մի քանի օրինակներով:

Այսպես, հայտնի է, որ արևմտահայ գրական լեզվում որաբարյան ձայնեղ առթվականները վերածվել են շնչեղ խուռների, հնպես՝ բերան>փերան, գարուն>բարուն, դարտ>քարդ, ձու>ցու, ցուր>չուր, իսկ խուլները, ձայնեղների, ինպես՝ պստ>բաղ, կաթ>գաթ, տուն>դուն, ծաղիկ>ձաղիկ, ճա-

կատ>ջազադ և այլն, բայց գրութիւնը մնացել է հինը, ավանդականը: Արեւելեալաբաններն առաջինը արտասանում են ձայնեղ, իսկ խուրերը՝ խուլ, ինչպես՝ բերան, դարուն, դաշտ, ձու, ջուր, պատ, կաթ, տուն, ծաղիկ, նակատ: Ընթացողները ելինելով պատմական սկզբունքից՝ արեւելահայ արտասանութիւնը համարենք «ճիշտ» ու «ազնիւ», դա դնենք ապագա միասնական գրական լեզվի հիմքում և արեւմտահայերից պահանջենք, որ նրանք ըստ գրաբարի ու արեւելահայերենի՝ փոխեն բ, գ, դ, ձ, ջ և պ, կ, տ, ծ, ն բաղաձայնների արտասանութիւնը: Հնարավոր է դա արդյոք: Պատասխանը բացասական է, որովհետեւ արեւմտահայերենում բերան, գարուն, դաշտ, ձու, ջուր, պատ, կաթ, տուն, ծաղիկ, նակատ հնչաբառերի (հնչվող բառեր) գոյութիւն չունեն, այլ գոյութիւն ունեն փերան, ֆարուն, քաշդ, ցու, շուր, գաթ, դուն, ծաղիգ, ջազադ հնչաբառեր:

Մի օրինակ էլ բերենք ձեռքանութիւնից: Գիտենք, որ արեւելահայ գրական լեզվում սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են ՈՒՄ վերջավորվող անկատար դերբայով և օժանդակ բայի ձևերով, իսկ արեւմտահայ գրական լեզվում կ(ը) մասնիկով, որը գրվում է գրաբարյան ներկայի ու անցյալ անկատարի վրա՝ որ նույնն է՝ աշխարհաբարի ըղձական եղանակի ձևերի վրա, ինչպես՝ արեւելահայերեն— գրում եմ—գրում էի, արեւմտահայերեն— կը գրեմ, կը գրէի:

Ընթացողները կրկին ելնելով պատմական սկզբունքից՝ ներկայի և անցյալ անկատարի կը գրեմ—կը գրէի արեւմտահայ ձևերը համարենք ավելի ընտիր ու ընդունելի, դրանք դնենք ապագա՝ միասնական գրական լեզվի հիմքում և արեւելահայերից պահանջենք, որ նրանք գրում եմ—գրում էի ձևերի փոխարեն գործածեն կը գրեմ—կը գրէի ձևերը: Հնարավոր է դա արդյոք: Պատասխանը կրկին բացասական է, քանի որ քերականական ձևերը ևս լեզվի հնչունների նման փոփոխվում են միայն լեզվի ներքին, պատմական զարգացմամբ: Այս հարցում ոչ մի փոխհամաձայնութիւն, վարգադրութիւն կամ հրաման դեր խաղալ չի կարող: Հազար անգամ իրավացի էին հին հոռոմեացիները, երբ ասում էին. «Լեզվի դեմ անգոր է նույնիսկ կայսրը»:

Ելնելով վերոհիշյալներից էլ՝ մեր խորին համոզմամբ՝ ո՛չ այժմ, ո՛չ մտակի ապագայում արեւելահայերենի և արեւմտահայերենի տարրերի միաձուլմամբ մի միասնական գրական լեզվի ստեղծումը անհնարին է, և այս ուղղութիւնով տարվող ու տարվելիք աշխատանքները ոչ մի գրական արդյունքի հասցնել չեն կարող:

Այստեղ խոսքը, իհարկե, արեւելահայերենի և արեւմտահայերենի բառապաշարային ներթափանցումների մասին չէ, որոնք լայն թափ ստացան ու ծավալվեցին 20-րդ դարի 50-ական թվականներից՝ հատկապես գեղարվեստական գրականութեան ու մամուլի լեզվում: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ արեւելահայերենի և արեւմտահայերենի բառապաշարը համարյա ընդհանուր է, երկու գրականների բառային տարբերութիւնները մոտավորապես չորս տոկոս են կազմում: Եվ բառապաշարային այդ ընդհանրութիւնն է; որ այնքան դյուրին է դարձնում արեւելահայերենի և արեւմտահայերենի փոխադարձ հասկանալիութիւնը:

Կարելի է գեղարվեստական գրականութիւնի բերել ամբողջական հատվածներ, բանաստեղծութիւններ, որոնք բառապաշարային տեսակետից արեւմտահայերենում և արեւելահայերենում նույնն են կամ համարյա թե նույնն են: Բառապաշարային այս ընդհանրութեան մասին առարկայնորեն զաղափար կազմելու համար վերջնենք մեկական բանաստեղծութիւն Մ. Մեծարենցից և Վ. Տերյանից:

Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագին,  
 Հաշիշով օծուն ու բալասանով.  
 Լուսեղէն համբէն ես կանցնիմ գինով՝  
 Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագին...

Համբոյրներ կուգան հովէն ու ծովէն,  
 Համբոյր լուսէն, որ շորս դիս կը ծաղկի,  
 Այս գիշեր Տօն է, հոգոյս՝ Կիրակի,  
 Համբոյրներ կուգան հովէն ու ծովէն:

Բայց լոյսն իմ հոգոյս փշ փշ կը մաշի,  
 Շրթունքս եմ ծարաւ միակ համբոյրին...  
 Ցնծագին գիշերն է լոյս ու լուսին՝  
 Բայց լոյսն իմ հոգոյս փշ փշ կը մաշի:

F a t u m

Կախարդական մի շղթա կա երկնում՝  
 Աներևույթ, որպէս ցավը խոր հոգու.  
 Իջնում է նա հուշիկ, որպէս իրիկուն,  
 Օղակելով լույս աստղերը մեկ-մեկու:

Մեղմ գիշերի գեղագանգուր երազում՝  
 Այն աստղերը, որպէս մոմեր սրբազան  
 Առկայծում են կարոտագին, երազում՝  
 Հավերժաբար իրար կապված և բաժան:

Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,  
 Կարոտավառ երազում ենք միշտ իրար.  
 Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան և հեռու,  
 Աստղերի պէս և՛ հարազատ, և՛ օտար:

«Սիրերգ»-ի մեջ գործածված է 35, իսկ «Fatum»-ի մեջ՝ 45 բառ, ուրեմն ընդամենը՝ 80 բառ, որից 7-ը՝ գիշեր, է (բայ), ու (շողկապ), ես, լոյս, հոգի, բայց, կան երկու բանաստեղծութիւններում էլ, իսկ մնացածը, ուրիշնքն Մեծարենցի գործածած 28 բառերից 27-ը, ասենք, հեշտագին, հաշիշ, բալասան, լուսեղեն, գինի, հով, ծով, ծաղկիլ, կիրակի, ցնծագին, լուսին և այլն, և Տերյանի գործածած բոլոր 38 բառերը, ասենք, կախարդական, շղթա, երկինք, աներևույթ, ցավ, խոր, օղակել, երազ, աստղ, մոմ, սրբազան, կարոտագին, հավերժաբար, կարոտավառ և այլն՝ երկու գրական լեզուների համար էլ ընդհանուր են: Առանձին է մնում միայն Մեծարենցի գործածած դի (հ) բառը՝ «Համբոյր՝ լուսէն, որ շորս դիս կը ծաղկի», որը բարբառային է, նշանակում է կողմ և առանձին ու բաղադրութիւնների մեջ կիրառվում է արևմտյան և արևելյան բարբառներում, ինչպես՝ ասդին, անդին (այս կողմ, այն կողմ), էս դիճը, էն դիճը (այս կողմը, այն կողմը), օ՞րդի (որտեղ), «Որդիանց որդի ճարել էր մի գառան մորթի» (Հ. Թ.):

Կրկնելով նշենք, որ մեր երկու գրականների բառապաշարային այդ մեծ ընդհանրութիւնն է ապահովում նրանց փոխադարձ հասկանալիութիւնը: Ե՛գ յանի որ արևելահայերենն ու արևմտահայերենը փոխադարձորեն հասկանալի

են, ուրեմն և նրանց գոյության փաստից ողբերգութիւն սարքելն անիմաստ է:

Յանկալի լինի այդ, թե ոչ, այժմ և մոտիկ ապագայում արեւելահայերենն ու արեւմտահայերենը կծավալվեն ու կզարգանան ոչ թե միահյուսմամբ ու միաձուլմամբ, միասնականացմամբ, այլ իրենց հնչյունական ու քերականական համակարգերի, ոճական միջոցների ներքին զարգացմամբ ու կատարելագործմամբ և կողք կողքի:

Վերջիվերջո լա՛վ, թե՛ վատ, դրակա՞ն, թե՛ բացասական երևույթ է հայ ազգի համար երկու գրական լեզուների գոյութիւնը:

Ինչպես նշված է արդեն, այս հարցը հուզել է հայ մտափորականներին մեր գրական լեզուների կազմավորման ժամանակներից սկսած: Ստ. Նազարյանցը ժամանակին գրական լեզուները համեմատելով ծաղիկների հետ՝ նշում էր, որ եթե շատ ազգեր ունեն միայն մեկ ծաղիկ՝ մեկ գրական լեզու, ապա հայ ազգն ունի երկու ծաղիկ՝ երկու գրական լեզու, ուրեմն և թող ծաղկեն ու փարթամանան մեր երկու ծաղիկները՝ արեւելահայերենն ու արեւմտահայերենը: Հարցի այսպիսի դրվածքը միանգամայն ճիշտ է և առօրեական է հնչում նաև այժմ:

Բայց, այսուհանդերձ, հայ ազգի նման մի փոքր ազգի համար երկու գրական լեզուների առկայութիւնը ավելորդ շքեղութիւն չէ՞ արդյոք, չէ՞ որ երկու գրական լեզուների առկայութիւնը վերջիվերջո խանգարիչ գործոն է ազգի միասնութիւն: Այստեղից ելնելով էլ՝ լրիվ հասկանալի է հայ մտավորականութեան՝ միասնական ազգային գրական լեզվի ստեղծման մտահոգութիւնը:

Իսկ հնարավո՞ր է դա արդյոք: Այո՛, հնարավոր է, բայց մի պարտադրական պայմանով: Եթե իրականանան հայ ժողովրդի իղձերը, նրա արդար պահանջատիրութիւնը, աշխարհով մեկ սփռված արեւմտահայութիւնը հնարավորութիւն ստանա վերադառնալ իր պատմական հայրենիքը՝ Արեւմտյան Հայաստան, և այսպիսով հայ ժողովրդի արեւելահայ և արեւմտահայ հատվածները հայ ինքնօրենն (սովետներն) սրտութեան կազմում զարգանան ու բարգավաճեն մի միասնական քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքով: Այս ժամանակից սկսած աստիճանաբար կարող է գերակշռութիւն ստանալ մեր երկու գրական լեզուներից մեկը՝ արեւելահայերենը կամ արեւմտահայերենը և պատմական որոշակի ժամանակահատվածում դուրս մղելով մյուսին՝ դառնալ հայ ազգային միասնական գրական լեզու, թեև չի ժխտվում նաև այն, որ նույն պայմաններում մեր երկու գրական լեզուները կարող են կողք կողքի գոյատևել եթե ոչ հավերժաբար, ապա գուցե գոնե դաբերով:

Ասվածներից կարելի է հանգել այն փորձակացութեանը, որ հայ ազգային լեզվի միասնութեան խնդիրը սոսկ լեզվական հարց չէ, այլ միաժամանակ արտալեզվական հարց է և կարող է լուծվել միայն քաղաքական փոփոխութիւններով կամ հեղափոխութեամբ:

М. Е. АСАТРЯН—О единстве армянского литературного языка.— По мнению автора, ни теперь, ни в ближайшем будущем создание единого литературного языка путем слияния западно- и восточноармянских языков невозможно, ибо вопрос этот выходит за рамки языковой проблемы и может быть решен только политическим путем—соединением в одно государство западной и восточной частей армянского народа.